ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2023 թվականի N 1153-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի քաղաքային համայնքի ղեկավարի 2012 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 431-Ա որոշմամբ՝ Արմավիր քաղաքի Չարենցի փողոցի 5 շենքին կից թիվ 5 ավտոտնակ ժամանակավոր հասցեում գտնվող 19.95 (տասնինն ամբողջ իննսունհինգ) քմ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով 3 (երեք) տարի ժամկետով հատկացվել է քաղաքացի Լիլիթ Ենոքյանին, համաձայն որի Արմավիրի քաղաքային համայնքի և քաղաքացի Լիլիթ Ենոքյանի միջև 2012 թվականի հոկտեմբերի 25-ին կնքվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր՝ /սեղ. նո 6356/:

Հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետը լրացել է:

Քաղաքացի Լիլիթ Ենոքյանը մինչ օրս բարեխղճորեն և լրիվ ծավալով կատարել է իր՝ կառուցապատողի պարտականությունները:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 441-րդ, 466-րդ, 468-րդ հոդվածների 1-ին մասերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ, 60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի քաղաքային համայնքի և քաղաքացի Լիլիթ Ենոքյանի միջև 2012 թվականի հոկտեմբերի 25-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի 9.1 կետն, ընդառաջելով քաղաքացի Լիլիթ Ենոքյանի 2023 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 5258 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի քաղաքային համայնքի և Լիլիթ Ենոքյանի միջև 2012 թվականի հոկտեմբերի 25-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում՝ /սեղ.նո 6356/ կատարել փոփոխություններ.

1) Հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետն երկարացնել մինչև 25.10.2026 թվականը:

2) Պայմանագրի 5.1 կետում նշված կառուցապատման իրավունքի տարեկան վճար՝ «1000 (մեկ հազար)» բառերի փոխարեն կարդալ՝ «12000 (տասներկու հազար)» բառերը:

[illegible]քանական բաժնին՝ քաղաքացի Լիլիթ Ենոքյանի հետ կնքել համաձայնագիր՝ 2012 [illegible]թվականի հոկտեմբերի 25-ին՝ /սեղ. նո 6356/ կնքված հողամասի կառուցապատման [illegible]իրավունքի տրամադրման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին:

Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023թ. սեպտեմբերի 20
ք. Արմավիր